Խաչիկ Դաշտենց

Ֆայտոն Ալեքը

6

Իսկապես փոխվեց առաջվա Գյումրին,
Շատ մարդիկ մեռան, Բիրժան դատարկվեց,
Փրկչի տաճարը դարձավ թանգարան,
Հացթուխ Սիմոնի տաք փուռը փակվեց:

Վախճանվեց նաև Պոլոզ Մուկուչը,
Եվ Բոշի թաղը սգաց մեծ ցավով,
Այդ հին գյումրեցու շիրիմի վրա
Եկավ քար քաշեց բանաստեղծ Ավոն:

Մեռավ լուսածայն գուսան Շերամը,
Չվեց աշխարհից բեռնակիր Մկոն,
Նոր քաղաքն աճեց, շինվեց, զարգացավ,
Բարձրացավ հասավ մինչև Պոլիգոն:

Վերին Ժամի մոտ այլևս չերևաց
Ֆոիկ Տիգրանը՝ իր բախտախաղով,
Անդարձ չքացան Յաղլի Նազարը,
Չանախ Վարոսը, Լիմոնադ Կարոն:

Էլ չկան Ճերմակ Համո ու Ծիտրո,
Ձիթոխցոնց խանի մառանները հին,

Լոկ համառում են նախշերը խանդոտ՝
Երանոսենց տան քարե հատակին:

Այն էլ, երևի, կըքանդեն շուտով,
Որպես անցյալի երազ հնաբույր,
Որ նրա հանգած խորանի վրա
Շինեն մշտահոս մի ուրիշ աղբյուր:

Փոված է հպարտ նոր Հայաստանի
Չքնաղ քաղաքը Լենինի անվան,
Դեռ Շիրակն այսքան շքեղ չի եղել,
Այն օրից, երբ որ մեղանչեց Եվան:

Լայն ու լուսավոր պողոտաներով
Թռչում է անթիվ ավտոմեքենա,
Եվ մի առավոտ, Կռունկը հուզված,
Դատարկ ֆայտոնով քաղսովետ գնաց:

Էսքան ղառղառ կա, էդքան հավքի մեջ
Ինչը՞ղ չեք կրնա մե Կռունկ պահել,
Ասաց ու ելավ գործկոմի շենքից,
Մի տարի հետո վախճանվեց նա էլ:

Մնաց Ալեքը մենակ, անընկեր,
Ձորի բարձունքին կուչ եկած տնով,
Կյանքը փոխվել էր, բայց ծեր գյումրեցիք
Դեռ շրջում էին նրա ֆայտոնով:

Հարս էին բերում, գնում էին կնունք,
Մինչև ճեղքվում էր աղամամութը,
Նրանց մեջ էին դարբին Մեխակը,
Որմնադիր Լիպոն, քարտաշ Հարութը:

Հետևյալ տարի տուրքը շատացրին,
Տխրեց Ալեքը, չէր կարող քնել,
Ճվարած նայեց ֆինբաժնի թղթին,
Որոշեց կառքը վաճառքի հանել:

Սակայն ո՞ւմ էր պետք հնոտիքն այդ խեղճ,
Ո՞վ ֆայտոն կառներ ավտոյի դարում,
Մեռել էր նույնպես Չփլաղ Փիլոսը,
Սայլակն ընկած էր Չերքեզի ձորում:

Մի օր մի ավտո Ալեքի կառքը
Ճամփին շուռ տալով թափով սլացավ,
Եվ այն օրվանից նրա ձիերը
Փողոցի միջից եզրերը անցան:

Լապտերը ծռվեց, ձիու պայտն ընկավ,
Էլ չէր բարձրանում մտրակը թափով,
Զգույշ էր քշում, ուշքը միշտ վրան,
Ու շուրջն էր նայում անվերջ սարսափով:

Բյուր ավտոների կանչերի միջև
Նրա զանգերի ձայնը խլացավ,
Իր սահմանները սաստիկ նեղացան
Ու նա մի գիշեր Գյումրուց հեռացավ:

Գնաց դեպի գյուղ, դեպի սարերը,
Արթիկի բանկում կառապան դարձավ,
Բայց ավտոները դեպի Արագած
Եվ դեպի Արթիկ խումբ-խումբ բարձրացան:

Ալեքն Արթիկից չվեց Սառնաղբյուր,
Ծածկվեց բարձրանիստ լեռների ետև,
Որ ոչ մի ավտո իրեն չգտներ,
Որ իրեն զգար գեթ մի քիչ թեթև:

Գտավ մի խաղաղ կանաչ սայլուղի,
Երթևեկում էր այդ լռիկ ճամփով.
Մի օր գյուղ գալիս, տեսավ մի ավտո
Կառքի ետևից վազում է թափով:

Էլ չհամբերեց: Կառքը աջ քաշեց,
Թառքից վայր իջավ, աչքերը մթնած,
Ու մտրակն առած, ահեղ գայրույթով
Գնաց ու կանգնեց ավտոյի առաջ:

Լազիրակ, ի՞նչ ես հետևես ընկել,
Մեր գյոգալ քաղաքն ու դաշտերն առաք,
Գոռաց Ալեքը, էդքանը քի՞չ էր,
Հիմա էլ սարերո՞ւ վրա կֆոռաք:

Հաղթեցիր, օղուլ, արևուդ ղուրբան,
Աշխըրհքի չարխը իմ ձեռքեն փստաց:
Ալեքը նայեց: Ուղիղ ղեկի մոտ
Կնոջ Վարդանի որդին էր նստած:

Ժպտաց Ալեքը, և նրա համար
Կարծես բովանդակ գետինը պրծավ,
Չքացավ սև ձին ճերմակ շուշանով,
Իր ապրած կյանքը հիշատակ դարձավ:

Նա հագած էր իր ճերմակ ձեռնոցը,
Լանջին կախված էր ժամացույցը հին,
Դեմքը գունատ էր: Խալաթի վրա
Փայլում էր մաշված մետաքսե գոտին:

Մի շաբաթ հետո Ալեքը մեռավ,
Նրա ձիերը շրջկենտրոն տարան,
Իսկ նրա կառքը ավտոյին դրած
Տեղափոխեցին Գյումրի՝ թանգարան:

***

Այս տարի ամռան ես իմ դստեր հետ
Այցի գնացի այդ թանգարանին,
Այնտեղ ես տեսա Ալեքի կառքը,
Նրա մտրակը և շորերը հին:

Երկա՜ր նայեցի: Հին Շիրակն այնտեղ
Պահվում է ինչպես սրբազան նշխար,
Երազ է դարձել, չքացել, անցել
Դեռ երեկ շնչող մի ամբողջ աշխարհ:

Գյումրի՜, իմ հոգին կապված է քեզ հետ,
Դու վաղուց դարձար ինձ հարազատ մայր,
Չկա մի քաղաք ամբողջ աշխարհում՝
Քեզ չափ բաղձալի իմ հոգու համար:

Եվ քո բարբառը ախորժ է սրտիս,
Քո փողոցները՝ նախշըված կտավ,
Եվ պատերը սև քարաշեն այն տան,
Որ ես հարցուփորձ անելով գտա:

Էնգելսի փողոց, տուն վաթսունևյոթ,
Անահի՛տ, դստրիկ, հիշիր այս բակը,
Այս բակից այն կողմ չենք կարող գնալ,
Սև սարն հեռու է, և ճամփան փակ է:

Տասնվեց թվին Բասենի դաշտից
Ինձ այստեղ բերին՝ մի ելակ հագիս,
Որքա՜ն եմ նայել ես դեպի Սև սար՝
Կանգնած այդ շենքի կանաչ տանիքին:

Այդ է պատճառը, իմ անգին դստրիկ,
Որ սրտիս մոտ է այս քարե տունը:
Գիշեր է արդեն. Գյումրին քնած է,

Եկ մենք էլ փակենք այս պատմությունը:

Ալեքի կառքով չենք կարող գնալ,
Եկ ավտո նստած սուրանք Երևան,
Ամեն մի սերունդ իր թռիչքն ունի,
Մեր դարն էլ կանցնի երազի նման:

1958, ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ
Երևան-Լենինական